խանորդն։ Նուիրակապետն խնդրէր 'ի Նախկին Դատաւորէն զվարձ ծառայութեան իւրոյ, եւ նա ոչ կամէր՝ իբր աղքատ և գիտնական, և 'ի բազմանալ բանից և երթեւեկելոյ 'ի վանս Հայոց, Քաղաքապետն 'ի մէջ մտեալ՝ էառ զմի մասն 'ի Հայոց և զմնացեալն 'ի Ցունաց և արձակեաց զնա։ Իսկ Նախկին Դատաւորն Մուսաննէրի ձեռամբ Դըպրապետի Դատարանի խնդրէր 'ի Հայոց զառաջին խոստացեալ գումարն ըստ մուրհակին եւ նոքա առաջի եդեալ զարարս նորին և զմեծամեծ վնասն, դարձուցին զնա յետս ունայն, և պահանջէին 'ի նմանէ զոր առեալ էր յառաջագոյն. և 'ի յայտնել նորա զխնդիրն նոր Դատաւորին, կոչեալ զՀայս ցուցանէ զմուրհակն և պահանջէ 'ի նոցանէ զամբողջ գումարն, և յընդդէմ դառնալն Հայոց բազմացան բանք յերկուց կողմանց, եւ ապա զիջեալ 'ի կամս նոր Դատաւորին ետուն նմա 10,000 դահեկան և առին 'ի նմանէ զմուրհակն, եւ Նուիրակապետն առեալ զնա տարաւ 'ի Կիպրոս յաքսոր։ Այսպէս վտանգեցաւ Դատաւորն Երուսաղէմի Մուսաննէրի յաղթեալ 'ի կրից եւ 'ի կամակոր բռնութենէ իւրմէ։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Գործ նոր Դատաւորին՝ յամառութիւն և ագահութիւն նորին։ Երկար վէճ ընդ Հայոց։ Բանք Նուրի Էֆենտեայ։ Գալուստ նոր հրովարտակի։ Ընթերցումն նորին յեկեղեցին Բեթղեհէմի։

Յանցանել 'ի գլուխ պաշտօնի իւրոյ նորոյ Դատաւորի մատեան առ նա Ցոյնք իբրեւ նախածանօթ բարեկամ իւրեանց, և սկսան որսալ զմիտս նորին և խոստանալ նմա աւելի քան 200 քսակս դրամոց. զի պատճառանօք երկարեսցէ զգործն, մինչեւ մարթասցին գտանել հնարս կամ 'ի Կոստանդինուպօլսոյ եւ կամ 'ի Կուսակալէն, յուշ առնելով նմա զառաջին բարերարութիւնս իւրեանց. ապա թէ ոչ՝ տալ տարագրել զինքն յանդարձ յօտարութիւն, որպէս Հայք ետուն աքսորել զնախորդն իւր։ Սակայն